ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԴԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 81 հոդվածի 3-րդ մասի, 83 հոդվածի 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի կանոնակարգի 56 հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ.**

1. Հաստատել սահմանադրական դատարանում դատական ծառայության առանձնահատկությունները՝ համաձայն թիվ 1 հավելվածի (կցվում է)։

2. Հաստատել սահմանադրական դատարանի դատական ծառայողի գործունեության գնահատման կարգը՝ համաձայն թիվ 2 հավելվածի (կցվում է)։

3. Սույն որոշմամբ հաստատված թիվ 1 և թիվ 2 հավելվածները հանդիսանում են ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի բաղկացուցիչ մասը կազմող հավելվածներ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

22 օգոստոսի 2006 թվականի
ՍԴԱՈ-44